

8631



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«01» 08 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 146 - 24

Նախաձեռնող՝

«Օրդ» ՍՊԸ

ք.Երևան, Ավագ Պեպրոսյան 2, բնակարան 15/1

Գործունեությունը՝

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի)  
հանքավայրի արդյունահանում  
Արարափի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 146 - 24

« 01 » օգոստոսի 2024թ.

Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրի  
հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Օրդ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը	/Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք Գինեվետ բնակավայր

**Ներածական մաս.** Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի Գինեվետ բնակավայրի վարչական տարածքում՝ Վեդի քաղաքից 15 կմ հյուսիս-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են՝ Այգեգարդը (մոտ 4.3 կմ), Գինեվետը (մոտ 2,9 կմ), Քաղցրաշենը (մոտ 4.3 կմ), Նոր Ուղին (մոտ 2.8 կմ):

Հայցվող տարածքի հողերը պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, բնակավայրերի (այգեգործական) նպատակային նշանակության հողամասեր (համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված կարծիքի) են:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

**Նկարագրական մաս.** Հետախուզված պաշարները 01.01.1985թ. դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ մինիստրների խորհրդի ՊՊՀ կողմից 01.03.1985 թվականի թիվ 4332 արձանագրությամբ և կազմում են B կարգի 48848 հազ. տ, C<sub>1</sub> կարգի 153867 հազ.տ.:





Արարատի մարզի Կարմիրսարի Կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրի կրային մերգելներն իրենց որակով բավարարում են որպես հումք պորտլանդ ցեմենտի համար ԳՈՍ 10178-76 «Պորտլանդցեմենտ և շլաքպորտլանդցեմենտ» տեխնիկական պահանջներին:

Հայցվող տեղամասը, որը զբաղեցնում է 62.13 հա մակերես, եզրագծվում է հետևյալ կոորդինատներով. (կոորդինատները ներկայացված են ARM WGS-84 համակարգով)

1. X=8469884.0000	Y=4423690.0000
2. X=8469874.0000	Y=4423701.0000
3. X=8469920.0000	Y=4423788.0000
4. X=8469970.0000	Y=4424014.0000
5. X=8470170.0000	Y=4424140.0000
6. X=8470340.0000	Y=4424272.0000
7. X=8470393.3000	Y=4424562.8000
8. X=8470882.2000	Y=4423968.6000
9. X=8470696.6000	Y=4423771.7000
10. X=8470375.6000	Y=4423347.7000
11. X=8470232.0000	Y=4423306.5000
12. X=8469990.9000	Y=4423597.5000

Նախագծված բացահանքի սահմաններում օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները B+C<sub>1</sub> կարգերով կազմում են 45 883 458 մ<sup>3</sup>: Հանքավայրը նախատեսված է շահագործել բաց եղանակով, տարեկան 2294173 մ<sup>3</sup> արտադրողականությամբ (մարվող պաշար): Արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 39 425 480 մ<sup>3</sup>, տարեկան 1971274 մ<sup>3</sup> ծավալով կրային մերգել:

Նախագծված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 925 մ,
- ամենամեծ լայնությունը – 767 մ,
- մակաբացման ապարների ծավալը – 292 028 մ<sup>3</sup>,
- օտարման մակերեսը - 62.13 հա,
- ծառայման ժամկետը-20 տարի:

Մակաբացման ապարներն էքսկավատորների և բեռնիչների միջոցով նախատեսվում է բարձել բեռնատար մեքենաներ և տեղափոխել առավելագույնը 10մ բարձրությամբ, հիմքի մասում՝ 27000 մ<sup>2</sup> մակերեսով լցակույտ: Լցակույտը գտնվում է բացահանքի հարավ-արևելյան մասում:

Հանքավայրում աշխատանքները նախատեսված է բացահանքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերից: Քանի որ հանքավայրի տարածքում առկա են գրունտային ճանապարհներ, ուստի մուտքային ավտոճանապարհների կառուցում չի նախատեսվում, գոյություն ունեցող ճանապարհները լայնացվելու են մինչև 8 մ:

Կրային մերգելների արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել դեպի ներքև շերտիման եղանակով՝ 1.6 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ HYUNDAI և CAT մակնիշի էքսկավատորներով: Նախ կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին, որից հետո իրականացվելու է օգտակար հանածոյի կույտի բարձումը սպառողների տրանսպորտային միջոցների մեջ:



Տեխնիկական ջուրը փոշենստեցման, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով նախատեսվում է բերել ջրցան-վացող ավտոմեքենայով՝ Արտաշատի ջրանցքի Հրազդան-Արաքս կոլեկտորից: Խմելու ջրի մատակարարումն իրականացվելու է Ավշար համայնքից:

Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը հաշվարկվել են 20860300 ՀՀ դրամ որից 13467300 ՀՀ դրամը կենսաբանական ռեկուլտիվացիայի համար:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 800.0 հազ. ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմման/վերացման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են մթնոլորտային օդի պահպանությանը, աղմուկի, թրթռման մակարդակի նվազեցմանը, կենսաբազմազանության պահպանությանը:

### ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրի ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացն ու հանրային քննարկումները իրականացվել և կազմակերպվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) պահանջներին համապատասխան: ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանում և Գինեվետ բնակավայրում կազմակերպվել և իրականացվել են հանրային քննարկումներ: 4-րդ հանրային քննարկումն ուղեկցվել է բազմաթիվ մտահոգիչ ելույթներով և դժգոհություններով: Հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցերը վերաբերել են, մասնավորապես, արդյունահանման աշխատանքների ժամանակ ճանապարհների հնարավոր ծանրաբեռնվածությանը և մեքենաների գերբեռնված լինելուն՝ արդյունահանվող, ինչպես նաև վերամշակվող հումքի սպառման կամ տեղափոխման հետ կապված սոցիալական հնարավոր ազդեցությունների առաջացումով (փոշի, աղմուկ, ճանապարհներին հասցվող վնաս և այլ ազդեցություններ):

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտը, Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղը, Արարատի մարզպետարանը: Բոլոր դիտողությունները, առաջարկությունները, կարծիքները, ներառյալ փորձաքննական գործընթացում ստացված շահագրգիռ հանրության դիմում-բողոքները հաշվի են առնվել փորձաքննական եզրակացությունը կազմելիս:

ՇՄԱԳ հաշվետվությունը բազմաթիվ առաջարկություններով, դիտողություններով և փորձաքննական գործընթացում ստացված կարծիքներով ուղարկվել է «Օրդ» ՍՊԸ-ին՝ լրամշակման, սակայն Ընկերության կողմից լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունում առկա են մի շարք թերություններ և անհամապատասխանություններ, այդ թվում՝

1. «4.2 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ» բաժնում խախտված հողերի վերականգնման համար նախատեսված գումարը ճիշտ չի ներկայացվել, քանի որ հաշվարկն իրականացվել է ճիշտ չի առնվել Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացման արժեքների



նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» N1352-Ն որոշման, ինպես նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի «Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը հաստատելու մասին» N1848-Ն որոշման պահանջները:

2. Հանքի փակման ծրագրում չի ներկայացվել (նաև չի լրամշակվել) օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը, ինչը Ընդերքի մասին օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ բ. ենթակետի պահանջ է:


3. ՇՄԱԳ-ում չի ներկայացվել հայցվող տարածքի հողերի նպատակային և գործառնական նշանակությունների վերաբերյալ ճշտված տեղեկատվություն, հայցվող տարածքի հողերը պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, բնակավայրերի (այգեգործական) նպատակային նշանակության հողամասեր են՝ համաձայն փորձաքննության գործընթացում կադաստրի կոմիտեի կողմից ստացված կարծիքի:

4. Չի շտկվել անհամապատասխանությունը հայցվող տարածքում մշտադիտարկումների կետերի, դրանց տեղադիրքերի և վայրերի վերաբերյալ՝ «Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը» աղյուսակով նախատեսված մշտադիտարկումներին համապատասխան, ինչը Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի պահանջ է:

5. Արդյունահանվող հումքի իրացման հետ կապված ՇՄԱԳ-ում եղել է տեղեկատվության անհամապատասխանություն: Համաձայն հաշվետվության՝ օգտակար հանածոն նախատեսվում է իրացնել տեղում, սակայն հանրային քննարկման ժամանակ պարզվել է, որ նախատեսվում է հանքավայրի հարևանությամբ կառուցել ցեմենտի գործարան և ամբողջ հանքանյութը տեղափոխել այնտեղ: Նշվածի վերաբերյալ բնակիչներից շատերը դժգոհություն հայտնեցին այն հանգամանքով պայմանավորված, որ արդյունահանված, հետագայում նաև վերամշակված հումք տեղափոխող մեքենաներն անցնելու են մի քանի բնակավայրերի տարածքով, առաջացնելով սոցիալական ազդեցություններ, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունում այլընտրանքային ճանապարհի կառուցում նախատեսված չէ:

6. ՇՄԱԳ-ում և կից ներկայացվող փաստաթղթերում առկա է եղել անճշտություն՝ հողաբուսաշերտի և բուսական ծածկույթի առկայության կամ բացակայության վերաբերյալ, ՇՄԱԳ-ի տեղեկատվության համաձայն՝ բուն հանքավայրի տարածքը գործնականում զուրկ է բուսական ծածկույթից, հողաբուսական շերտ չի ձևավորվել, սակայն փակման ծրագրի էջ 6-ում նախատեսված է միջոցառում շինարարության և բացահանքի մակաբացման ընթացքում հանված հողաբուսաշերտի պահպանման վերաբերյալ:

7. Փորձաքննության գործընթացում ստացվել են կարծիքներ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելավայրի/ապրելավայրի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից ստացված գրության և շրջակա միջավայրի նախարարության ԲՀՊՏ վարչության կողմից ստացված կարծիքի համաձայն Արարատի մարզի Կարմիր գրքի նշված տարածքը հանդիսանում է մի շարք վտանգված բույսերի և կենդանիների աճելավայր/ապրելավայր, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքերում, իսկ նրանց մի մասը՝ բնության պահպանության միջազգային միության (IUCN) ցանկում (ընդհանուր առմամբ բույսերի





14, իսկ կենդանիների 16 տեսակներ): Կարմիր գրքում գրանցված տեսակների առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը ճշտելու նպատակով ՇՄԱԳ փաթեթն ուղարկվել է ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտ, որտեղից ստացվել են հակասական կարծիքներ: 2024 թվականի հունիսի 11-ի գրությամբ նշվել է, որ հանքավայրի համար առաջարկվող տարածքում հազվագյուտ, կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների աճի վերաբերյալ տվյալները բացակայում են, իսկ հունիսի 19-ի գրությամբ նշվել է, որ ինստիտուտի կողմից տարածքներում կատարվել է բուսաբանական հետազոտություն՝ 18.08.23թ-23.08.23թ ընկած ժամանակահատվածում, նույն գրությամբ նշվել է նաև լրացուցիչ բուսաբանական հետազոտության անհրաժեշտության վերաբերյալ՝ **վաղ գարնանը /ապրիլ, մայիս ամիսներին/** ելնելով այդ տարածաշրջանի բույսերի վաղ վեգետացիայի շրջանից: Օրդ. Ընկերության կողմից նույն ինստիտուտի 2024 թվականի հուլիսի 23-ի գրությամբ փորձաքննության է ներկայացվել տեղեկատվություն առ այն, որ ՀՀ ԳԱԱ Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողների կողմից կատարված հետազոտությունների արդյունքում Արարատի մարզի Կարմիրսարի տարածքում հազվագյուտ՝ Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակեր չեն հայտնաբերվել, սակայն Երախ (Բոզ-Բորուն) լեռնաշղթայում աճում է 16 կարմիրգրքային բուսատեսակ, սակայն **գրության մեջ չի նշվել հետազոտությունների կատարման ժամանակահատվածը:** Ինստիտուտի կարծիքը չի կարող դիտարկվել հիմնավոր և արժանահավատ, քանի որ բուսատեսակների մի մասի ծաղկումը, պտղաբերման շրջանը մայիս-հունիս ամիսներին է, հետևաբար, օգոստոս ամսին կատարված դիտարկումների ժամանակ վեգետացիոն շրջանի ավարտման հետ կապված, հողում կարող էին պահպանված լինել միայն դրանց արմատային համակարգերը կամ սերմերը: Նշվածը հաշվի առնելով՝ հարկ է նշել, որ արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը, համաձայն «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 26-ի 1-ին մասի 3)-րդ կետի՝ ընդդրքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

8. Փորձաքննության ընթացքում ստացվել են 16 դիմում-բողոքներ հանրագրի ձևով (շուրջ 1150 ստորագրությամբ՝ Արտաշատ համայնքի Այգեգարդ բնակավայրի բնակիչների անունից), որոնք ևս հիմք են հանդիսացել փորձաքննական եզրակացության կազմման համար: Հանրագրում նշվում է, որ հանքավայրի տարածքը գտնվում է գյուղատնտեսական հողերի անմիջական հարևանությամբ և բաց հանքավայրի շահագործումը, կարող է վնաս հասցնել և բնապահպանական ռիսկեր պարունակել ինչպես շրջակա միջավայրի այնպես էլ հարակից տարածքներում գյուղատնտեսական գործունեության համար և բնակիչները դեմ են արտահայտվել տարածքում արդյունահանման աշխատանքների կատարմանը: Բնակիչների և շահագրգիռ հանրության դժգոհությունն արտահայտվել է նաև 4-րդ հանրային քննարկման ընթացքում:





## ԵԶՐԱՓՈՒԿ ՄԱՍ

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից՝ «Օրդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան

